ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 03 դեկտեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 55-Ա/Ք

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՆԱԴԵՎԻՉ ՇՈՒՄԻԼԻՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը, հաշվի առնելով Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի նախագահ, տնտեսական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Գենադևիչ Շումիլինի՝ միջազգային համագործակցության զարգացման գործընթացում ունեցած ավանդը և ներդրումները, մասնավորապես, հայ և բելառուս գիտնականների գիտակրթական համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման և զարգացման գործում ունեցած նշանակալի ծառայությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի նախագահ, տնտեսական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Գենադևիչ Շումիլինին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի Ոսկե մեդալ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ